ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

14 հունիսի 2019 թվականի թիվ 201- Ա

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ 7-ՐԴ ԽԱՂԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետով, Համահայկական ամառային 7-րդ խաղերի նախապատրաստական աշխատանքներ պատշաճ կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ

1. Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը.
   ա/ վերանայել Համահայկական ամառային 7-րդ խաղերի մասնակիցների ցանկը՝ ապահովելով ավելի ընդգրկուն մասնակցություն և վերջնական առաջարկը ներկայացնել մինչև 2019 թվականի հունիսի 20-ը,
   բ/ համայնքապետարանների հետ համատեղ կազմակերպել մարզիկների և թիմերի ինտենսիվ մարզումները:
2. Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ վարչությանը՝ համագործակցելով մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության հետ ապահովել խաղերին առավելագույն մասնակիցների ներգրավվածություն մարզի բոլոր բնակավայրերից:
3. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին նախապես ապահովել մարզիկների գործուղումների կազմակերպման հետ կապված բոլոր աշխատանքները:

Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

14.06.2019

X

14 հունիսի 2019թ.
ք. Իջևան